

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչուհու խան թիւ 7

22 ՅՈՒՆԻՍ 1908 ԵՐԵՎԱՆԻ

در عايدہ غلطاہہ قورشونى خاندہ نومرو ۷

Արտատպ
Ա. ՍԱԿԱՅԱՆ

Խմբագրութիւն
ԵՐԵՎԱՆԻ ԹՕԼԱՅԵԱՆ (ԿԱՎՈՇ) * ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ (ԲԱՆԱԳՈՂ, ԼԻՈՒԹԻԿԵԱՆ)

Տնօրէն
Ռ. ՍԱԿԱՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌՁԵԻ

Նախ. — Ամբաստանեալ, ոտքի ելիր:
Իզգէթ փաշա ոտքի կ'ելլէ:
— Անունդ ի՞նչ է:
— Իզգէթ:
— Հօրդ անունը:
— Չեմ գիտեր. փիճ եմ:
— Տարի՞քդ:
— 45:
— Ի՞նչ ազգէ ես:
— Բիւրտ:
— Արճե՞ստդ:
— Լրտեսութիւն եւ պնակաւորութիւն:
— Բանի՞ հոգիի արիւնը մտար:
— Հաշիւը չեմ գիտեր, տէ՛ր նախա-
գահ:
— Ուրիշ միլիոն ոսկի հարստութիւնը
ուրիշ չ'իյնցիր:
— Հայերը կողոպտելով եւ ժէճ-թիւր-
քերը ծակը նետելով:
— Բանի՞ Հայ եւ քանի՞ իսլամ ծովուն
խորը զրկեցիր:
— 100,000 անգլի:
— Որչափ անմեղներու մարը լացուցիր:
— Կ'աղաչեմ, տէ՛ր նախագահ, դուք
ալ հիմա իմ մարս մի՛ լացնէք:
— Պատասխանէ, Իզգէթ, լրտեսութիւն
պէտք չ'է:
— Բոլոր Հայերուն:
— Ինչո՞ւ անցեալ օր կը փախչէիր կոր:
— Օձիւք ձեռք չտալու համար:
— Դուն չե՞ս խախտել այս ըսածներուդ
համար:
— Եթէ խախտել, չէի ըներ:
— Սրիկայութիւն պէտք չ'է:
Դատարանը առանց խորհրդակցութեան
որոշեց կամուրջին գլուխը կախել չա-
մըցած, անամթ, սրկայ, լրտես Իզգէթը,
որ դժբախտաբար փախաւ:
X Նախ. — Անունդ ի՞նչ է:
Ամբ. — Մէհմէտ Ալի:
— Պաշտօնդ:
— Հէյնէթը Թահգըզիէին նախագահն էի:
— Ի՞նչ էր դորձդ:
— Ամէնուն արիւնը մանել:
— Միջին հաշուով քանի՞ անմեղ տան-
ջած ես:
— Հաշիւը չեմ կրնար տալ, գրեթէ բո-
լոր Օսմանցիները:
— Հայերը ի՞նչ կ'ընէիր:
— Կը կողոպտէի, տէ՛ր նախագահ:
— Մարդ գլուխ քանդակահան ոսկի առ-
նելով կը գոհանայիր:
— Մէկ մէծիւն միջին 500-1000 ոսկի:
— Բանի՞ ոսկի ժողոված ես այս կեր-
պով:
— 75000 ոսկի:
— Եթէ պահանջած դրամդ չտային,
ի՞նչ կ'ընէիր:
— Վրանին իջիւրս կը նետէի եւ կ'ամ-
բաստանէի որ յեղափոխական են:
— Ի՞նչ տանջանք կուտայիր անմեղ-
ներուն:
— Թեւեռնուն տալը խաշած հակիթ
կը դնէի, կողանցներու մէջ կը նստե-
ցնէի, միտերնին չըմպըղով կը քաշէի, եւ
կը ծեծէի, կը ծեծէի, բայց երբէք... ա-
րիւն չէի հաներ...
Դատարանը անմիջապէս որոշեց կա-
խաղանը հանել Մէհմէտ Ալի ըսուած ա-
ւաղակը:
X Նախ. — Նախկին ոստիկանապետ
Շէֆիքը կանչեցէ՛ք:
— Հրամայեցէք, տէ՛ր նախագահ:
— Ոտքի ելիր:
— Կը խնդրեմ, բիւթաթիւղ ունիմ,
չեմ կրնար ոտքի ելլել:
— Ոտքի ելիր:
— Կը խնդրեմ, բիւթաթիւղ ունիմ,
չեմ կրնար ոտքի ելլել:

— Ոտքի ելիր կ'ըսեմ կոր սրկիւն:
— Շատ աղէկ, մի՛ բարկանաք:
— Բանի՞ տարու ես:
— 82 տարու:
— Արճե՞ստդ:
— Հիմա պարագայ եմ, (հառաչեցով).
ահ, ատենօք ոստիկանապետ էի:
— Բեզի կ'ամբաստանեն թէ Հայ ան-
մեղներու արիւնն ես մտեր, անոնց ա-
րիւնը խմեր ես, հայկական ջարդին պատ-
ճառ ես եղեր:
— Միայն ես չէ՛, տէ՛ր նախագահ, Ա-
րաք Իզգէթ փաշան ալ:
— Դուն քու մասիդ պատասխանէ.
քանի՞ Հայ սպաննած ես:
— Մօտաւորապէս մէկ միլիոն:
— Բանի՞ ժէճ-թիւրք ծովուն խորը
զրկեցիր:
— Միջին հաշուով՝ քանի՞ մը միլիոն:



— Իհրոս անիծեցիր... ես ալ Գովմիլիւսան Վ.ի մը նման
բուսիկ ոտքերով Հում կը փախչիմ կոր:

— Ուրա՞նի դրամ գողցար:
— Ես չէի գողնար, Մէհմէտ Ալին կը
գողնար եւ ինձի կը բերէր:
— Բանի՞ անիծեալ դողն էր, իսկ դուն
եաքայիք:
— Հրամայեմ էք, տէ՛ր նախագահ:
— Դուն մասիդ եղած ամբաստանու-
թիւններէն ո՞րը կ'ուրանաս:
— Ոչ մէկը:
Դատարանը նկատելով որ Շէֆիք փա-
շայի պանդոլը փակել տուած է, որոշեց
այդ ցաւը առեւելու համար անունովը
պանդոլի մը բանալ:
X Նախ. — Կանչեցէք հիմա սա՛ անամթ
Հախիւն, Բերայի նախկին կառավարիչ:
— Հրա՞նք էք, տէ՛ր նախագահ:
— Տարի՞քդ, անունդ, հօրդ անունը,
եւայի՛ն:
Նախ. — Չորս հինգ աւարդըման չի-
ներ ես դուն քանի՞ մը տարուան մէջ,
ի՞նչպէս շահեցար այդ դրամը:
— Գողմալով:
— Ի՞նչպէս կը գողնայիր:
— Աս ու ան կը մտանէի, հանրատու-

ներու հետ ընկեր էի, խաղամոլութիւնը
կ'արտօնէի, եւ ամէն Հայու կը սպառնայի:
— Ի՞նչ կերպով:
— Ո՛ր եւ է մէկը կը բռնէի, քանի
մը օր կը բանտարկէի, այն ատեն քանի
հարիւր ոսկի կը պահանջէի չուրջիներէն,
կը բերէին, ես ալ աղատ կ'արձակէի:
— Եթէ չբերէին:
— Ես ալ բանտէն չէի հաներ:
— Եթէ տալու դրամ չունենային...
— Որի՞ն հօգը. բանտին մէջ կը մա-
չեցնէի:
— Մէյ մը եկողը մէյ մըն ալ կը բե-
րէր:
— Ամէ՛ն անգամ որ դրամի պէտք ու-
նենայի, անմիջապէս անոնց մէկը ու եւ
սուտով մը ծակը կը թխմէի... այն ատեն
փարան կը ցնծային:
— Դատարանը որոշեց 101 տարի բան-

տարկել Հախիւն եւ բոլոր աւարդըմանները
անկեղծ Օսմ. գոմիւլէին նստիւրի:
X Նախ. — Կէօչ Օղլուն հոս կանչեցէ՛ք:
Կէօչ Օղլուն Անտոն Ահեհայի մը մէջ
դատարան ներկայացաւ:
— Անտոն, քու աղագակիցներդ քեզի
կ'ամբաստանեն թէ անոնցմէ շատերու ա-
րիւնը մտեր ես:
— Սուտ է, տէ՛ր նախագահ:
— Ամէնուն դէմ յարուցաւ ես տուեր:
— Սուտ է:
— Ամէնքը ծակը դրեր ես. դուն Նա-
զիֆ Սիրուրիին մարդն ես եղեր:
— Ի՞նչ ընեմ, տէ՛ր նախագահ...
— Դուն ամաթթօր լրտես մըն ես ե-
ղեր. օրող-լրտես մը:
— Ներէ՛ ինձի, տէ՛ր նախագահ:
— Հօրմէք 50,000 ոսկի ժառանգած
էիր որով կրնայիր շատ աղէկ ապրել,
բայց դուն Ձիա կոչուած անձի մը հետ
հոգիներ այրեր եւ անմեղ աղջիկներ գլխէ
հաներ ես:
Անտոն կը լռէ:
— Դուն քու ծնողդ ալ մատներ ես,

քու ընտանիքիդ անդամներն ալ. քրոջդ
Եւրոպա մեկնած միջոցին զայն ձերբակա-
լել տուեր ես:
Անտոն կը լռէ:
— Դուն անցեալ տարի Ղալաթիոյ ե-
ռաճային դպրապետը իբր Հնչակեան ամ-
բաստանցիդ:
Անտոն մի՛շտ կը լռէ:
— Անտոն, դուն լրտեսներու ամէնէն
ցածոգին եղար, որովհետեւ դոնէ անոնք
փարա շահելու նկատումը ունէին, մինչ-
դեռ դուն վրայ փարա կուտայիր անմեղ-
ներ այրելու համար:
— Մեղայ, կիրակի օր Ս. Յովհան Ոս-
կերեան դպրի եւ մեղայի եկայ: Աստուած
ինձի ներեց:
— Բայց Աստուծոյ առաջ պէտք է
պատիժ քաշես՝ 101 տարուան բերդար-
գելութեամբ:
Անտոն կը մարի կ'իյնայ:
X — Հայերու Պատրիարք Օրմանեանը
հոս կանչեցէ՛ք:
Մաղաքիա կը ներկայանայ տոգոյն եւ
դալկահար:
— Օրմանեան, ազգդ քեզէ հաշիւ կը
պահանջէ կոր:
— Տէ՛ր նախագահ, ես անակացած
եմ, չեմ կրնար հաշիւ տալ:
— Ազգդ քեզի իբր դող եւ լրտես
կ'ամբաստանէ կոր:
— Մեղայ, մեղայ, մեղայ:
— Դուն աղգին որբերուն, այրին-
րուն, աքորտածներուն ու փախածներուն
դրամը պողպղդ անցուցեր ես:
— Մեղայ, մէյ մըն ալ չեմ ըներ:
— Մի՛ ըներ: Արդէն թող տուող չկայ
որ ընես. հիմա կուհիմ հաշիւները մաքրէ
եւ լրտեսութեան համար մօրուքը ածիլէ
նստէ: Լրտեսութեանը համար որոշ պա-
տիժ մը չենք սահմաներ քեզի, որովհետեւ
այն ատեն Թուրքիոյ երեք քառորդ մասը
պէտք էինք պատմել: Բայց դուն իբր
Պատրիարք ազգդ մատնած ըլլալուդ հա-
մար պիտի երթաս Երուսաղէմ պիտի ընա-
կիս:
X Նախ. — Մէլիմ Մէհմէտ կանչեցէ՛ք:
Բարապաղը. — Բացակայ:
Դատարանը ի բացակայութեան 15
տարի բանտարկութեան դատապարտեց
անամթ Սէլիմը:
X Նախ. — Նէճիպ Մէհմէտ կանչեցէ՛ք:
Նէճիպ կուգայ. խեղճը չարթուան մը
մէջ կ'մտնէ քեզի:
— Բոլոր դողած դրամներդ բի՛ր նա-
խիւք, կ'ըսէ դատաւորը:
— Ամէնին ալ կերայ:
— Ուրեմն դուն ալ 15 տարի կե՛ր
եւ նստէ՛:
(Դատարանը դեռ կը շարունակուի, բայց տեղ
չունենալուս պատճառաւ զարուակելիս կ'ըսենք):
ԽԱԿԱՅԱՆ Ա.

ՍԻՆԼԲՈՐ ԴԵՄԲԵՐ
II.
ԲԱՐԳԵՆ... ՎԱՐ ԹԱՓԷ
— Դուն մը. ո՛չ աւելի, ո՛չ պակաս:
Ձիւքը չ'անցցող չկայ:
Շատեր իբր կեղծաւոր կը ճանչնան.
ոմանք զայն միայն Մուշի որբերուն 150
ոսկին իբր ուտողը կը դաւանին. ես իբ-
րեւ սըյրըխապետ կը ճանչնամ զայն.
Դո՛ւն հակառակը կը սնդեմ եւ Ղալաթիոյ
Մատենադարանին մէջէն ըրած դողու-
թիւնները երեւան կը հանես. ուրիշ մը
Օրմանեանի ձաղն է կ'ըսէ՛ այս հաղար

ԱՊՏԱԿՆԵՐ

Ձարկ, բայց մոխի ընէ՛:

անգամ դարչնի վարդապետը, որուն հոգին հիմալոյնէն ապահովագրած է նոյնինքն... Պ. Սարգսյէլ:

Ժպիտ մը. Յուդայի, վասակի ժպիտ մը, որ անդադար կը խաղայ անոր արդէն սեւացեալ դէմքին վրայ, երբ նոյն խալ նախատես զինքը:

Երբ թընքն անձրեւ կուգայ կ'ըսէ:
Ողնիկ կը նմանի. որքան մօտենաս այնքան պատեանին մէջ կը քաշուի եւ փուշերը դէպի քեզի կ'ուղղէ:

Եթէ ձեռքէն գայ, մէկ քանի հոգիներ կայ — ես ալ մէջը — որ կամ պիտի մատնէ և կամ... հում հում պիտի ուտէ:

Բարեբախտաբար կարծեմ իրեն ձեռք տեսնու չըջանն է որ սկսաւ:

Օրմանեանի այս անվերապահ եւ խորամանկ բարեկամը և փոքրաւորը, ո'րն որ կ'ուղղէ, գողցած փարաները չհաս. գործելու ետեւէ միայն եղաւ:

Կը կազմէր մասը այն սինքլոր դէմքերուն, որոնցմով չըջապատուած էր մօնսէնթոն Անտառապետան:

Ղալաթիոյ քարոզիչ. Ամենափրկիչ եկող գեղորձիներէն ոմանք անձնութեամբ խոստովանցող. վերջապէս մարդ մը որ Ղալաթիոյ բնակիչ է՝ ամէն կերպով և սակայն Ղալաթիան պատրուակ մըն է իրեն համար. ամէն տեղ էր, բացի Ղալաթիայէ:

Հոն չէր պառկեր սակայն:
Թէեւ դո՛ւն, ան, միւսը կը կարծէին թէ մաքրակնոցող... այդ եկեղեցականը (անարժան), այդ Այնթապի մարդուկը, այդ անկրօնը և անասունածը հոն կը դիւշերէ:

Ո՛ւ, հազար անգամ ո՛չ:
Բանկալթիի գեղորձին՝ Սամսոնէին ո՞վ պիտի հովուէր, այն խեղճը ո՞վ պիտի միմիկարէր զինքները և այդ չէ՛ր արդէն պաշտօնը Բարեզն վարդապետին:

Ձինքը կարելի էր տեսնել ամէն օր Բանկալթիի չիտակ ճամբուն վրայ, որ կը քայլէր ճիշդ կաթողիկոսի մը պէս. խեղճին ուրախութիւնը փորը մնաց. ինչե՛ր չպիտի ընէր, երբ — Աստուած մի՛ արասցէ — Օրմանեան յաշոգէր կաթողիկոս ըլլալ:

Ի՛նչ աշխատեցաւ, Արարատի մէջ եւ քեզ աստղանշով քիչ յօդուածները գրեց. բայց զուր ջանք անցուտ վաստակ, որովհետեւ այլեւս վար առնուեցաւ ձեզիպէս. ներուն զիմակը, ձեզի՛՛ ձեր պաշտօններուն զուրկէն դուրս աւելիւ կարգը եկաւ, ո՞վ Բարեզն և վարդապետ և անխաղաղութիւն կերութիւն:

Արմաշ գաղթի ինկար վերջապէս. ուսանողները, խեղճ որբեր, դուրս ըրիր ամէնքը մէկէն՝ որպէս զի քիչ մը աւելի չա՛ն ձգէր վանքը քեզի. Հիւանդանոցի մասնիչ, խափիէ տնօրէնին և տիկնոջ հետ ինչե՛ր չըրիր վանքին մէջ, ինչե՛ր չըրիր նախկին վանահայրին, այդ անբախտ և քեզի պէս հազար հատ արժող թորգոմ վրէ՛՛ի դէմ, զայն արատաւորութիւն համար:

Հաշիւ պիտի տաս հիմայ մեղի թէ՛ ի՛նչ ըրիր երեք ամսուան մէջ զրկուած 3—400 ոսկին. կողորդը խիստ քննուած մըն էր ըստ պիտի անցնենք տեսնելու համար թէ՛ սովեակներու անուշով եկած դրամները, որոնք քեզի կը զրկուէին անընդհատ, կողորդիդ ո՛ր կողմը փակած են:

Աւելի աղէկ էր կատուին թռք վրստահիլ, քան թէ մեր դպրութեանը քեզի, որուն վանահայրական աթոռը պղծեցիր:

Միւլըոր դէմքերուն երկրորդին արժանաւորութիւնը համար չնորհաւորելով քեզ, ո՞վ խորամանկ խօշ գու, ո՞վ յաւախոտութեան և ամբարտաւանութեան մարմնացումը, ուսուսն ձգարիտ հայրենասէրներու, բարեհաճէ չուտով կորսուի մեր այդ նուիրական վանքէն, եթէ ոչ վկայ այն աղատութիւնը որ չնորհուեցաւ մեզի մեր սիրեցեալ կայսրէն, ճամբու ծախքը աչքերին պիտի առնենք և պատգամաւորութիւն մը պիտի զրկենք Արմաշ երեւո՛ւ... թընքնու համար:

Թէեւ աւելի կը նախընտրեմ որ թըքնենք երեսը... քան թէ հին հալիւններդ աչքէ անցնենք և կողորդէդ դուրս հանենք Մուշի որբերուն և այրիներուն դրամը:

Այսպիսի մըն ալ չէիր արժեք, որովհետեւ օճեքուն դէմ չեն մաքառիր, այլ կը ճղմնն:

ԽԱՐԱՅԱՆ

Լուր ելաւ թէ՛ Տաճատ վրէ՛. ոստիկանական նախարարութեան Հէյեքթըր քահանայի ըստած աւաղակային ակումբին Իհիս անուանուեր է և վահրիճ վրէ՛. ալ՝ բանտերու տնօրէն:

★ Այս օրերս Հայ թերթերու խմբագրատունները այցելեց ջոյ վաճառականներէ կազմուած պատգամաւորութիւն մը ինչպիսիւ համար որ իրարու միջև չուտեն: Խմբագիրներէ ոմանք պատասխանեցին թէ զըվըրճը սող է և հետեւաբար աճան միջ միայն կրնան ուտել: Աս չէ խնդիրը. այս վաճառական մենք աղաները ասէ անալ քիմիկազի չէին ընել նոյն խալ մեղի բարեւ տալու. — խելքերնին նոր գլուխնին եկաւ:

★ Հոռոմէն կը տեղեկացնեն թէ՛ պապը Օրմանեանին կարգինալութեան աստիճան տուած է: Այս առթիւ չնորհաւորական քառերը զրկած են Տիգրան Տէր Ներսէսեան և զաւակունք, Պետրոս Զէքի Կարապետեան, տօքթ. Պօրճեան, Արիս Ֆէսճեան, Բարեզն վրէ՛, Միկտիչ Մեւիքեան, Ոսկերեանի մեծաւորը և բոլոր խաչագողներն ու պնակալէղները:

★ Թաղապետական պաշտօնները պակաս հացերը կը դրաւեն... իրենց տունները տանելու համար: Միայն այն հացադարձներուն չեն կշռեր, որոնք կաշառք կուտան՝ ամսականի դրութեամբ:

★ Միկտիչ Մեւիքեան խմբագրատունն այցելելով, խոստացաւ հինգ ոսկի տալ, եթէ չհրապարակենք այն անունները, որոնցմէ 40ական — 50ական ոսկի առած է ամուսնական խնդիրներ յաշոգնելու համար: Նոյնը ըրին կամ պիտի ընեն կրօնական և քաղաքական ժողովներուն անդամները, բացի մէկ քանի բացառութիւններէ:

★ Կ'ըսուի թէ Տ. Ոսկի մտադիր է Տ. Պապուսը յորժորովիլ այտուհետեւ, խառն գնչու օրերէն զիջած ոսկիները ապահով տեղ մը պահելէ վերջ:

★ Աղատութեան հովը փնջուս պէս Գաթիմ պատնէջէն վար ինկաւ և ինքզինքը գտաւ կաղ իւր մը վրայ, որ զինքը պիտի առաջնորդէ Պաղատաի ճամբով դէպ ի Հայրենիք:

★ Վարդապետի կիրակին Սուրենեանց սեղանին մասնակցողներէն լրագրող մը իր մէկ պաշտօնակցին յանկարծ կը հարցնէ. — «Սակայն կրնա՞ս ըսել թէ քանի բաղձականներ կան»: — «35 կը պատասխանէ միւսը»: — «Միտա՛, մէկ աւելի. ուրովհետեւ դուն երկու հոգիի տեղ կուտես կոր»:

★ Երկու խմբագիրներու մէջ (նոյն օրը). — «Կոյիկ ծակեր է»: — «... Աղատութեան շունչ առնելու համար բերանը բացեր է»: պատասխանեց միւսը:

★ Իտալիայի Մալսուսէի ընկերութիւնը որոշած է իր չղգնականը զրկել Անդրէա՛ մի մը, որուն մէջ վստահ է թէ առաջնութիւն պիտի չափն... յետադիմութեան մէջ: Գաղափարը ձ ձիւ չղգնաւ առաջնութիւնը պիտի չափն անշուշտ:

★ Հորոյին քան ֆիզիկ չէ գացեր Օրմանեանի գաղթիէն անկողնու. անցեալ օր Գնալիի մէջ ժամերով պաշտպանի է Օրմանեանը՝ յայտարարելով թէ անկառունան աշխի մը չէ, այլ... սուրը մը:

★ Ո՛վ է ան որ խաղաղութիւնը երբեմնի քարոզիչն էր, Գաթիմ-Փաշայի պատուական կարճատև քարոզիչը, կրօն. Ժողովը զիւսնադարը, Ֆէրիդի-Քարոզիչը և յիւս. Մեզի կը հարցնեն թէ ինչո՞ւ Տիգրայ վրէ՛. խաղաղութիւնը հաւատարմացը չեւեր չղգնաւ, այլ թաղերու մէջէն կը քալէ հետիոտն. — Իր Տիւրքիսէն տեսնուլու համար անշուշտ:

★ Պրուսացիները թէեւ Արշարունի Սրբազանը կանչեր են իրենց ըով, բայց Սրբազանը պատասխանել է թէ ժամանակ չունի երթալու, երբ Գնալիի օդը մ'աչափ օդատուն է հոս:

★ Անտոն Ալիք աղգաւորական ճառ մը խօսել է կիրակի օր Ոսկերեանի եկեղեցին թըքերէն լեղուով: Կը տեսնէ՛ք զլիսուս եկածը. — Անտոն Ալիք՝ աղգաւոր: Անկէ վերջ Հաճիպար ամպիւրը ելեր է և

ընթերցանութիւն մը ըրեր է մանկապարտէզի լաճի մը նման: Ներկայ էնկիւրցի կիները սաստիկ գայթակղեր են. — «Բա՛ պաշտօնը կիներէն պա՛գ, չիւսի աշխարհակալարտա փարոգ վերահեյ պաշտօնը չար»:

★ — Մարի՛կ, ինձի 10 զրուշ տուր: — Ի՛նչ պիտի ընես նորէն: — Երթամ Ծաղիկի պիտի ծախեմ: — Բա ծաղիկ ծախելով ի՛նչ պիտի չափն, դուն պաղչէպա՛ն ես:

— Բա չէ՛ մարիկ, ան ծաղիկը չէ՛, զաւեշտաթերթը՝ Ծաղիկը, մէջը Պատրիարքին պատկերն ալ կայ:

— Բա, ձգէ՛, չօճօխ, առ հեղի՛ք իր ազգին խե՛ր մը չունեցաւ, ո՛ր տեղէն ո՛ւր իր պատկերը քեզի խե՛ր պիտի ունենայ:

ՍՍՈՒՆԵԹԵ ԱՆՕՆԻՄ

ԳՐԱԲՆՆԻՉՆԵՐ, Ո՞Ր ԾԱԿՆ ԷՔ...

Շաբաթէ մը ի վեր գրաքննիչի առաջ տեսած չունիմ, — փա՛ռք Աստուծոյ, և կը յուսամ մինչեւ մեռած օրս չտեսնել:

Մեր այդ դամակէսեան սուրերը, մեր այդ կենդանի պատուհանները, մեր գրիչներուն այդ սիրելի բարեկամները, զորս ամէն առտու իրիկուն չորս հինգ անգամ տեսնելու մեծ երջանկութիւնը կ'ուսնենայինք՝ ամէն անգամուն ալ գլուխսուսնալ մը ինչպիսիւ անգուսպ փափաքը զգալով, մոռնելու նման մէջ մէկ ծակ մտեր են, թերեւ իրաւցնէ գլուխնին բան մը չտեսնալու համար:

Եթէ գիտնայիք, ինչե՛ր քաշել կուտային մեզի, այդ տրամաբանութեան և ողջմտութեան ամբարկում առաքելաները: Նախ ասոյ ըստը կարելի չէր գործածել, որովհետեւ Օսմ. դրօշակին վրայ աստղ մը կայ և մեր սիրելի Վեհապետը երջող կը բնակի:

Բացարձակապէս արգելուած էր մեզի ըսել. — «Ի՛նչ գեղեցիկ են աստղերը, աստղերը երկինքին ջանքն են, աստղերը Աստուծոյ մեծութիւնը կը պատմեն...»:

— Թերեւս մէկ տարուան մէջ տասը միլիոն աստղ բառը ջնջուած է հայերէն գրերու քննարկէ:

— Կայսրը չուզեր որ աստղ բառը գործածուի, կ'ըսէին մեզի այդ խմբագրատեսիլները:

Ու աստղին տեղ կը դնէին յուսաւոր, շող, երկինքի արեւ, աստղ, չեմ գիտեր ի՛նչ... Եթէ ձեռքերնուն գար երկինքին աստղերը պիտի վերցնէին, ըսելով որ չեն փափաքիր անոնցմէն դառնուիլ:

Եւ ասիկա իրենց իրաւունքն էր, ուրովհետեւ եթէ այսպէս չընէին ամսական... 350 զրուշին չպիտի կրնային առնել:

Աստիկ ամսականին մը համար ա՛յս չափ վարձուցութիւն, խաչո՛ր, ասանկ բան մը ընելու համար մարդ՝ ոչ թէ անանկ, այլ... սառնաւ ըլլալու է:

Յետոյ, մեր յաւաքար գրաքննիչները արգելած էին մեզի խօսիլ յառաջդիմութեան, զարգացումի, ազատութեան, անկախութեան վրայ: Այն բառերը կ'երեւի թէ շատ միաստակար են եղեր և երկրին տապալման պատճառ, և մենք այդ բառերը փրկելու համար կը պատաւարուէինք մէջ մէկ կրթ. փափանք անպատճառ անոնց. — կրթ. յառաջդիմութիւն, կրթ. զարգացում, կրթ. ազատութիւն, կրթ. անկախութիւն, կրթ. կրթ. կրթ...:

Ազգ բառը արգիւում էր նմանապէս, և անոր տեղ դրած էին հաւանք անճոռնի բառը: Ազգային չկար, այլ... հաւանքային: Կը զարմանամ թէ ի՛նչպէս չէին ջնջած ազգական բառն ալ, քանի որ ան ալ ազգով մը կը սկսի. կը վստահեցնեմ ձեզի թէ աչքերնին փախած է, ապա թէ ոչ ա՛ն ալ կը ջնջէին:

Յիմար բառը արգիւում էր, մինչեւ որոշ ժամանակ մը: Անկէ վերջ... արտօնուեցաւ:

Միտքերնէք կ'անցնէ՛ր թէ սարսափելի արգելքի տակ դրուած էր նորապիսի անմեղունակ բառը:

Մեկախօսութիւն բառն ալ ջնջուած էր խաղաղութիւնը մէջէն, որովհետեւ ասկէ 8-10 տարի առաջ Գոթլին Պոլսի եկաւ և զարգնութիւնը խմբող մեկախօսութիւն մը արտասանեց:

Յիմարութիւնը արգիւում էր թաւաքարութիւն վրայ. դերասան մը տասը տարիէ ի վեր չէր կրնար յիմարանալ. կ'ապաշտար, կը ցաւագարնար, ի՛նչ կ'ուղէք կ'ըլլար, բայց չէր կրնար խելքը թոցնել:

Եւրոպական թատերախումբները բերանաբաց կը մնային, երբ կը լսէին թէ չեն կրնար արտասանել քաղաւոր բառը. եւ իրենց թատերախումբները բոլոր թաւաքարները անմիջապէս կը մկրտուէին եւ կը փոխուէին կոմի, մարքիզի, դուքսի: Իշխանութիւն ալ չպիտի ըլլար, այլ մարքիզութիւն, դուքսութիւն, կոմսութիւն: Թատերախումբները թաւաքարները և իշխանութիւնները կրնային դատ բանալ իրենց անձին դէմ եղած այս նախատինքին համար, բայց գիտէին որ ապուշներու դէմը կը գտնուին կոր:

Երբեմն եւրոպացի դերասանները չուարկով իրենց բերնէն կը փախցնէին ակամայ թաւաքար կամ իշխանութիւն բառը: Այն ատեն գրաքննիչը ոտք կ'ելլէր իրար անցած, բեմ կը վազէր չնշանեղձ և կը սկսէր պոռալ:

— Ի՛նչ ըրիք, վաղը զիս պաշտօնէս պիտի հանեն, իմ գօթարգելութեան պատճառ պիտի ըլլաք:

Բերայի Ամիրթատունին մէջ երկայնահասակ մարդ մը կար որ անմիջապէս Տպագր. տեսուչին և ներքին գործոց նախարարին ժողովար կուտար, կոր... Թաւաքար բառը փախէր մէկու մը բերնէն, թէեւ խնդրի նիւթ եղող թաւաքարը Լուդովիկոս Ժ.՝. կամ Մասգոթի լուսան ժէն ըլլար:

Շէյքսպիրի Օթթոն արգիւում էր, բայց Օթթոնը նախանձոյն վերածուած՝ կը շարունակէր ներկայացուիլ:

Շէյքսպիրի Շայլոքի մը քանիցս արգիւում էր և եղած էր Բիկոյեքքո. մեծագոյն յեղափոխութիւնը կը նշանակէր Հայնրիխ խաղաղ. Սիս, Բիւ-Պաս, Էռնանի, ասոնք անխնայական քիւսներ էին:

Մնական Պաշտօնի մը ունէր, ուրուն եթէ տարիէ ի վեր արտօնութիւն չէին տար, ինչո՞ւ. որովհետեւ վերջին վարագործին... մեռելներու ստուերները կ'երեւէին:

Անցեալները զիս մա՛ղ մնաց մինչեւ թարապուս պիտի քշէին, որովհետեւ երգչուհի մը բեմէն ըսաւ. — Բալէ՛ աղլիկս քալէ...»

Կ'երեւի թէ... քալին ալ արգիւում էր: Գրաքննիչները իրենց չհասկցած բաները չէին ձգեր, և որովհետեւ ընդհանրապէս բան մը չէին հասկնար, կ'երեւակայէք մեր վիճակը:

Անգամ մը քօ-քուրի փրանսերէն բաւուր ունէր գրած:

— Պո՛ւն տէ՛մք, հարցուց բարակ գլուխ գրաքննիչ մը:

Երբ հասկնացին, — Ե՛՛ լիւրումը վար, պատասխանեց, քօ-քուրի չէար, օնըն եւրիսէ կիւղէ օբէրա խորջալար քօ...:

Անգամ մը ֆանիսի բառը գրած էինք ի նշան քրքիլի ու ծիծաղի. սիրելի բարեկամ մը անմիջապէս մեզի մոռնալ ըրաւ, ըսելով որ զանին ակնարկած ենք՝ քա՛հ քա՛հ ըսելով:

Մէ, մանաւանդ իմ քաշածս, ա՛ն: Սկիւտարցի գրաքննիչ մը ունէինք որ բացարձակապէս կ'արգիլէր ինձի Սկիւտարցիներու վրայ խօսիլ:

— Եղա՛յր, ամէնքն ալ բարեկամ են, չըլլար, հանէ՛... կ'ըսէր:

Բերացի գրաքննիչը Բերացիները կը հանէր...:

Օրթագլեզի գրաքննիչը Օրթագլեզի պատիւը կը պաշտպանէր ընտանաւոր: Իրազրին տէրն ալ Պոլսեցի էր, որով Պոլսեցիներու վրայ չէին կրնար գրել:

Խմբագրապետը Գոթլինաւոյի էր. Գոթլինաւոյի գէմ խօսիլ չէր ըլլար: Հետեւաբար, շատ անգամ կը ստիպուէին Չինիմայունի վրայ խօսիլ:

Վրան բայց գրաքննիչներու բարոյականը կը խաթարէր, որոնք դուրսը ամէն ինչ կ'ուտէին թայց մեղի գողերուն պէս մեզ մէկ սուրբեր կ'ըլլային:

Եկեղեցականներու մասին զրկու ալ չէր ըլլար, որովհետեւ մտրդիկը բարեպաշտ էին և ա՛յն հինգ չարիքի Ղալաթիոյ ժամը մոմ կը վառէին:

— Աստուածնիդ սիրէք, ի՛նչ ապուրուեմ, կը հարցնէի իրենց:

— Միտք Գոթլինեանին պէս բարոյական բաներ զրէ՛, կը պատասխանէին, տե՛ս, անկէ բան մը ջնջած ունէ՛նք:

Օ՛՛՛, Ռ.Ա.ԹՅ՛՛

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՆԱՆ